<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ>> ՀՈԱԿ

Ք. Արմավիր, Հանրապետության 32 < 01 >> ապրիլի 2025թ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին

<<ՔԻՆԳ ԳԱԶ >> ՍՊԸ-ի տնօրեն Ն. Սահակյանին

Հարգելի Ն. Սահակյան.

«ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի լուսավորություն» ՀՈԱԿ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «ՔԻՆԳ ԳԱԶ » ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող միջև 25.03.2025թ. կնքվել է ԱՄԱՀ-ԼՀ-ԳՀԱՊՁԲ-25/1 ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրի շրջանակներում Վաճառողը ստանձնել է պարտավորություն մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ապրանքը: Սահմանված ժամկետում տեխնիկական բնութագրին համապատասխան ապրանքի մատակարարում չի եղել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու հիմքով « ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի լուսավորություն» ՀՈԱԿ-ը հարկադրված է 2025թ.-ի ապրիլի 2-ից Պայմանագիրը ամբողջությամբ միակողմանի լուծել: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել ՀՀ կառավարության 04.05.2017թ- թիվ 526-ն որոշման հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողին տրվում է 5 աշխատանքային օր՝ որակաորման և պայմագրի ապահովումները՝ համապատասխանաբար 397620 (երեք հարյուր իննսունյոթ հազար վեց հարյուր քսան) ՀՀ դրամի և 265080 (երկու հարյուր վաթսունհինգ հազար ութսուն) ՀՀ դրամի չափով, վճարելու համար: Փոխանցումը անհրաժեշտ է կատարել Գնորդի բանկային հաշվին (ԱՐԱՐԱՏ ԲԱՆԿ ԲԲԸ Արմավիր մ/ճ հհ 1510039920060100):

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք որոշում կայացնել Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6/ա-րդ կետի համաձայն <<ՔԻՆԳ ԳԱԶ >> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

ՏՆՕՐԵՆ՝ Է. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Сканировано с CamScanner